

Պաշտոնական ընդդիմախոս
իրավաբանական գիտությունների դոկտոր
Արմեն Մովսեսի Խաչատրյանի

ԿԱՐԾԻՔԸ

Անահիտ Գառնիկի Այվազյանի՝ «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» թեմայով ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավունքի սուբյեկտի էության ժամանակակից մոտեցումների տեսական իրավական վերլուծությանը:

Սոցիալական և իրավական պետություն կառուցելու ճանապարհին Հայաստանի Հանրապետությունը հետևողական ջանքեր է գործադրում միջազգային տնտեսական և իրավական տարածքին ինտեգրվելու ուղղությամբ: Դրանով պայմանավորված՝ մեր երկիրը ակամայից դառնում է նոր քաղաքակրթության և նոր տիպի սոցիալական հարաբերությունների ձևավորման գլոբալ գործընթացի մասնակից, ինչի պատճառով պետության ներսում ընթացող իրավական գործընթացների ու դրանց մասնակիցների վարքագծին առնչվող հիմնահարցերը և իրավունքի սուբյեկտների փոխգործողության տարբեր տեսանկյունների վերլուծությունը հայրենական իրավական գիտության համար ձեռք են բերում կարևոր նշանակություն: Իրավունքի սուբյեկտներին առնչվող հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև երկրում ձևավորված հասարակական հարաբերությունների ներքին վերակառուցման գործընթացի տրամաբանությամբ, որը նպատակ ունի ամրապնդել իրավական պետության և քաղաքացիական հասարակության հիմքերը, ձևավորել նոր կառուցակարգ իրավունքի սուբյեկտների փոխհարաբերություններում և մշակել նոր գիտական մոտեցումներ իրավունքի սուբյեկտի էության ընկալման հարցում:

Թեմայի արդիականությունը, բացի նեղ գիտական խնդիրներից, պայմանավորված է նաև ինչպես ներքին օրենսդրական, այնպես էլ սահմանադրաիրավական ամրագրում ստացած միջազգային-իրավական հիմնադրույթներով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է», որի «հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»: Մարդու՝ իբրև բարձրագույն

արժեքի, ընկալումն անվիճելի է նաև միջազգային-իրավական փաստաթղթերի տեսանկյունից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված մեծ թվով միջազգային-իրավական փաստաթղթերը հեղափոխական վերափոխումներ նշանավորեցին մարդու իրավական կարգավիճակի վերաբերյալ գոյություն ունեցող պատկերացումներում: Այսօր մարդու իրավունքները դարձել են իրավունքի գլոբալ չափորոշիչ: Պետության՝ որպես սուվերենի, դոկտրինը այլևս որոշակի հակասության մեջ է մարդու՝ որպես բարձրագույն սոցիալական արժեքի, գաղափարի հետ, որպիսի հակադրությունը տեսական հարթության մեջ ունի գիտական մեկնության կարիք: Հենց այս հիմնախնդրի լուծմանն ուղղված փորձ է ատենախոսի հետազոտությունը, որի առարկան իրավունքի սուբյեկտի, որպես սոցիալական-իրավական երևույթի, ժամանակակից ընկալման տարբեր տեսանկյունների ուսումնասիրությունն է:

Գիտական աշխատանքի նպատակը իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսության տեսական-մեթոդաբանական հիմքերի ամբողջացումն է, դրա առավել կարևոր հիմնադրույթների ձևակերպումը: Իր առջև դրված նպատակին հետամուտ՝ ատենախոսը փորձել է սահմանել և բացահայտել իրավունքի սուբյեկտի հասկացության հիմնական տեսանկյունները, հստակեցնել իրավասուբյեկտության կառուցվածքը և հիմնական տարրերը, սահմանել իրավունքի սուբյեկտների դասակարգման հիմքերը, բացահայտել անհատի, որպես իրավունքի սուբյեկտի հասկացությունը, հետազոտել իրավաբանական անձի նորմատիվ-իրավական էությունը, ինչպես նաև սահմանել պետության, որպես իրավունքի յուրահատուկ սուբյեկտի, առանձնահատկությունները:

Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավական գիտության մեջ առաջին անգամ համակարգային և բազմատեսանկյուն վերլուծության են ենթարկվել իրավունքի սուբյեկտին վերաբերող հիմնախնդիրները, փորձ է արվել տեսական վերամշակման ենթարկել իրավունքի ընդհանուր տեսության կոմից իրավունքի սուբյեկտի վերաբերյալ ճյուղային իրավաբանական գիտություններից փոխառված դոկտրինալ պատկերացումները և ձևակերպել դրա առավել կարևոր հիմնադրույթները: Անցկացված հետազոտության արդյունք է հանդիսացել իրավունքի մեկնությունը՝ որպես սուբյեկտների յուրօրինակ հաղորդակցային համակարգի, սահմանվել են հաղորդակցության իրավական տեսակի առանձնահատկությունները:

Ատենախոսն առաջարկել է իրավունքի համակարգի առաջնային համակարգաստեղծ տարրի հիմնախնդրի ինքնատիպ լուծում՝ իրավունքի սուբյեկտի հայեցակարգային մոտեցումը, այսինքն ոչ թե նորմակենտրոն, այլ իրավունքի սուբյեկտի առումով՝ անձնակենտրոն իրավունքի համակարգի գաղափարը, ընդհանուր տեսական դիրքերից սահմանել է իրավունքի սուբյեկտների դասակարգման հիմքերը, իրավաբանական անձի էության տարբեր մակարդակները, պետության, որպես իրավունքի առանձնահատուկ սուբյեկտի, յուրահատկությունները:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ այն տեսական և մեթոդաբանական հիմքեր է ստեղծում և սկզբունքային լուծումներ առաջարկում իրավունքի սուբյեկտի հիմնախնդրի վերաբերյալ, արձանագրում իրավահասկացողությանը նոր սուբյեկտային մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Հետազոտության արդյունքում ձևավորվել է իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսության ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գաղափարների և կանխադրույթների համակարգ: Մյուս կողմից, աշխատանքի գործնական նշանակությունը նրանում է, որ դրանում ձևավորված են մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են ինչպես գոյություն ունեցող նորմատիվ-իրավական սահմանումների, այնպես էլ իրավական համակարգի և նորմատիվ կարգավորման հետագա կատարելագործմանը:

Ինքնատիպ են հեղինակի դատողությունները իրավունքի, որպես սուբյեկտային-հաղորդակցային համակարգի, վերաբերյալ: Ատենախոսը, մասնավորապես, գրում է, որ իրավունքի, որպես սուբյեկտների հաղորդակցային համակարգի, համար բնորոշ է հաղորդակցության հատուկ տեսակը: Իրավական հաղորդակցությունը հիմնվում է «ընդհանուր իրավական կամքի ձևավորման գաղափարի վրա», որում համատեղվում է անձանց կամքը: Հաղորդակցության իրավական տեսակը «վերաբերում է ոչ թե կամքի բովանդակությանը, այլ արտաքին կողմին» (կամքի ձևին): Ոչ՝ օրենսդիրը, ոչ՝ դատավորը իրավական հաղորդակցության ընթացքում դրա մասնակիցներին չեն կարող պարտադրել իրենց սեփական կամքը՝ վերջիններիս կամքի փոխարեն: Հաղորդակցության նման տեսակը ենթադրում է մասնակիցների նպատակների միավորում, նրանց շահերի միասնություն: Օրենսդիրը և իրավակիրառ մարմինը իրավական հաղորդակցության ընթացքում կատարում են միջնորդի, այլ խոսքով՝ մասնակիցների կողմից լիազորված կողմի դեր, որոնք ապահովում են կապը իրավունքի սուբյեկտների միջև: Իրավական հաղորդակցությունը հանդես է գալիս որպես «սոցիալական համագործակցության հատուկ տիպ», որն առավել կատարյալ է, քանի որ հիմնվում է «բանականության ու արդարության վրա» (տե՛ս ատենախոսության 11-րդ էջը):

Աշխատանքում առկա են գիտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ դատողություններ՝ հասարակության զարգացման տարբեր փուլերում իրավական հաղորդակցության դրսևորման ձևերի ու եղանակների, իրավունքի սուբյեկտների իրավական ազատության սահմանների, իրավունքի սուբյեկտների իրավասուբյեկտության բովանդակության ու դրա տարրերի, իրավունքի սուբյեկտների կարգավիճակային տարբերությունների և գիտական արժեք ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, որոնք ընդգծում են կատարված հետազոտության գործնական նշանակությունն ու կիրառական արժեքը:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հեղինակի կողմից իր առջև դրված հետազոտական հարցերը բազմակողմանի և լրիվ լուծելու նպատակադրությամբ, որի ճիշտ ընտրությունը ատենախոսին հնարավորություն է տվել գիտական պատշաճ մակարդակով իրացնել առաջադրված խնդիրը:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ հեղինակի 2 մենագրություններն ու ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հրատարակված 5 գիտական հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսական աշխատանքի հիմնական գիտական արդյունքները:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ այդուհանդերձ դրա վերաբերյալ առկա են առանձին դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հանրահայտ է, որ իրավունքի համակարգաստեղծ տարրը իրավական նորմն է, համապարտադիր վարքագծի այն կանոնը, որը պետական հարկադրանքի ուժով հանդես է գալիս իբրև իրավունքն ամբողջացնող ու միավորող գործոն: Իրավունքի նորմերն իրավունքի համակարգը ձևավորող կմախքն են, այդ համակարգի կառուցվածքի առաջնային տարրը, առանց որոնց իրավունքի համակարգը զուրկ է նորմատիվ բովանդակությունից: Հանդիսանալով իրավունքի համակարգի սկզբնական բջիջներ՝ իրավանորմերը կենսունակություն են հաղորդում այդ համակարգին և հենց դրանց միջոցով են իրացվում իրավական կարգավորման հիմնական նպատակները:

Այս գրեթե արքիոմատիկ դատողությունների լույսի ներքո ատենախոսն իր աշխատանքում, պաշտպանության ներկայացվող 2-րդ հիմնադրույթով, համարձակ հետևություն է անում այն մասին, որ իրավունքի համակարգի առաջնային համակարգաստեղծ տարր է «ոչ թե իրավական նորմը, այլ իրավունքի սուբյեկտը» (ատենախոսության 10-րդ էջ): Իրավունքի համակարգի համակարգաստեղծ տարրի վերաբերյալ նման հեղափոխական մոտեցում պարունակող գիտական հաստատումը, ինչպես նկատեցինք տեսական և մեթոդաբանական հակասության մեջ է իրավունքի ընդհանուր տեսության մեջ արմատավորված ավանդական պատկերացման հետ, իսկ հեղինակի պնդումն առ այն, որ «ո՛չ նորմը, ո՛չ իրավահարաբերությունը, ո՛չ իրավունքի իրացման, կիրառման ակտը և նման այլ տարրեր չեն կարող հանդես գալ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերի միմյանց կապող օղակ», մեր կարծիքով բավարար չէ իրավունքի սուբյեկտը իրավունքի համակարգաստեղծ տարր «հոչակելու» համար: Ուստի, պաշտպանության ներկայացված հիմնադրույթն ունի առավել ծանրակշիռ գիտական փաստարկման ու հիմնավորման կարիք:

2. Ատենախոսության 189-րդ էջում բերված «իրավական գործունակության» հասկացության հեղինակային սահմանումը, մեր կարծիքով, ունի հավելյալ մեկնության ու պարզաբանման կարիք: Հեղինակի կարծիքով, «գործունակություն ասելով...պետք է հասկանալ իրավակարգի կողմից սահմանված պատրաստակամությունը կամքի, գիտակցության, կազմակերպչական, գույքային, այլ նախադրյալների, իրավունքի սուբյեկտի գործառույթների իրականացման պայմանների տեսանկյունից»: Նույն կերպ, եզրակացությունների 6-րդ կետում (էջ


205) կարդում ենք. «Գործունակություն ասելով... պետք է հասկանալ իրավակարգի կողմից սահմանվող անձի պատրաստակամություն՝ կարողություն, հնարավորություն, կամքի, գիտակցության, կազմակերպչական, գույքային այլ նախադրյալների, իրավունքի սուբյեկտի գործառույթների իրականացման հանդեպ պայմանների տեսանկյունից»: Գործունակության նման հեղինակային սահմանումները թե՛ մտքի բովանդակության շարադրման և թե՛ դրա ընկալման առումով, մեղմ ասած, խնդրահարույց են:

3. Աշխատանքի տարբեր էջերում հանդիպում են մտքի բովանդակությունը ոչ հստակ շարադրելու դեպքեր:

Մատնանշված դիտողություններն ու նկատառումներն ունեն մասնավոր բնույթ և չեն ստվերում Ա. Այվազյանի աշխատանքի ընդհանուր առմամբ դրական գնահատականը:

Ատենախոսությունը և դրա սեղմագիրը պատրաստված են դրանց ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ աշխատանքի թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնել, որ Անահիտ Գառնիկի Այվազյանի «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները. տեսական-իրավական վերլուծություն» թեմայով ատենախոսությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն ուսումնասիրություն է, որը գիտականորեն հիմնավորված լուծումներ է պարունակում իրավունքի տեսության կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ: Աշխատանքը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված պահանջներին, ուստի դրա հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
 իրավաբանական գիտությունների դոկտոր  Ա. Խաչատուրյան

Ա.Մ.Խաչատուրյանի ստորագրության իսկությունը հաստատում են՝
 ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի  Ա. Խաչատուրյան
 պաշտոնակատար՝ Հովհաննիսյան

20 մայիսի, 2022թ.

